



ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (191)

11 նոյեմբեր 2021

Ալեքսանդր Սպենդիարյանի 150 ամյակին նվիրված միջոցառումների շարքը



4

Օպերայի 2021



Ջոնա Դոսքինս, Սանն Գալոյան, Պլասիդո Դոմինգո, Բեխզող Դավրոնով

7

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ



ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Դովհաննիսյան, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույո, ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Դովհաննիսյան, ԵՊԿ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Արմեն Բաղդասարյան, ԵՊԿ գիտական խորհրդի քարտուղար, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Օլյա Նուրիջանյան

3

«ԱՐԺԵՎՈՐԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ՝ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ ԱՊԱԳԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆԿԻՐՎԱԾ ԵՊԿ 100-ԱՄՅԱԿԻՆ



ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Դովհաննիսյանի ողջույնի խոսքը երկօրյա միջազգային գիշաժողովի բացմանը

2

✓ «Հայկական Հզոր խմբակ». Բարաջանյանը եւ ընկերները

2

✓ Ծովինար Չալոյանի դասախոսությունները «Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

3

✓ ԵՊԿ-ի ՎՈՐՐՅԱԼ

3

✓ ՄՊԵՆԴԻՎՐՅԱԼԸ ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ

5

✓ Yerevan Jazz Fest 2021

7

✓ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8

ВЫПУСКНИЦА ЕГК
ИМ. КОМИТАСА -
ДЖУЛЬЕТТА ГАЛСТЯН:
“НАДО ПЕТЬ ТАК,
ЧТОБЫ ЧЕРЕЗ ДЕСЯТЬ
ЛЕТ ВСПОМИНАЛИ,
КАК ВЫ ПЕЛИ”



ДЖУЛЬЕТТА ГАЛСТЯН

4

«Արժեքներով անսպառ» ստեղծում ենք ապագան» գիտաժողովը

Ինչպես հայտնի է 2021 թ. լրացավ Երևանի պետական կոնսերվատորիայի 100-ամյակը: Այս կապակցությամբ կազմակերպվեցին տարբեր միջոցառումներ, որոնցից մեկը «Արժեքներով անսպառ» ստեղծում ենք ապագան» միջազգային երկօրյա գիտաժողովն էր: Այն մեկնարկեց հոկտեմբերի 21-ին: Գիտաժողովին մասնակցեցին Երևանի պետական կոնսերվատորիայի և Գյումրու մասնաճյուղի պրոֆեսորներն ու դասախոսները, հյուրեր ԱՄՆ-ից, Ռուսաստանի Դաշնությունից, Չեխիայից, Լիբանանից և Իտալիայից: Մեզ հետ էր նաև Արցախը:

«Արժեքներով անսպառ» ստեղծում ենք ապագան» խորագիրը հնարավորություն տվեց մասնակիցներին տարբեր թեմաներ ներկայացնել: Գիտաժողովն ընդգրկում, բազմաբովանդակ օրակարգ ուներ:




Շուկինար Սուսիսյան

Ձեկույցների մի մասը ֆուլկլորագիտության ամբիոնի պատմության և առհասարակ հայ հոգևոր ու ժողովրդական երաժշտությանն էին նվիրված:

Կարդեան Զամալսարանի դոկտոր, մագիստրոս, պսակավոր, երաժշտագետ, դասախոս Զայկ Սրկ. Իբիւճեանը ներկայացրեց «Պետրոս Պիանդինի և Միսթարեան Ա. Զարբ. մի քանի նկատողություններ» գեկույցը:

ԵՊԿ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Ալինա Փահլևանյանը ներկայացրեց հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնի պատմությունը:



Նունե Աթանասյան

Դոցենտ, արվեստագիտության թեկնածու Անահիտ Բաղդասարյանը ներկայացրեց հայ հոգևոր երաժշտությունը ֆուլկլորագիտության ամբիոնում:

Ֆուլկլորագիտության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Նունե Աթանասյանը ներկայացրեց ամբիոնի կողմից նախաձեռնած մեր օրակարգի մասին:



Արցախի Վալիֆորնիայի (USC) թորնթոնի երաժշտական դպրոցի պրոֆեսորի ասիստենտ, Երևանի պետական կոնսերվատորիայի ինստիտուտի ղեկավար Մարկո Սալեմյան

ստումնասիրությունը: Դոկտոր Արցախի Վալիֆորնիայի (USC) թորնթոնի երաժշտական դպրոցի պրոֆեսորի ասիստենտ, Երևանի պետական կոնսերվատորիայի ինստիտուտի ղեկավար Մարկո Սալեմյանը:

ԵՊԿ 100-ամյակին նվիրված գիտաժողովում առանձնահատուկ ներկայացվեց նաև կոնսերվատորիայի ստեղծման և կայացման պատմությունը, անդրադարձ կատարվեց կոնսերվատորիայի երախտավորներին:

Երաժշտության պատմության ամբիոնի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Արմեն Բուդաղյանի գեկույցը նվիրված էր Ռոմանոս Մելիքյանի նախաձեռնությամբ առաջին երաժշտական ստուդիայի բացման և գործունեության պատմությանը: Դրանց այդ ստուդիան էր, որ 3 սենյականոց բնակարանից վերածվեց Երևանի պետական կոնսերվատորիայի:

Կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը ներկայացրեց Կոմիտասի՝ կոնսերվատորիա բացելու գաղափարի իրագործման փորձերը, մանրամասն մշակված ծրագրերը: Այս ելույթից հետո ընթացվեց Կոմիտասի մասին հայերեն գրված գրքերը այլ լեզուներով թարգմանելու հարցը, քանզի ռուսալեզու և այլ աղբյուրներում հաճախ հանդիպում են ոչ հավաստի տեղեկություններ:

Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր, XX-XXI դարերի երաժշտության գիտակ Սվետլանա Սարգսյանի ելույթը նվիրված էր կոմպոզիտոր, դաշնակահար Սուրեն Ջաքարյանին: Թեմայի ընտրությունը պատահական չէր, քանի որ դեռ 90-ականներից Սվետլանա Սարգսյանը աշխատել և լուսաբանել է կոմպոզիտորի ստեղծագործությունները: Երաժշտագետ անդրադարձավ Սուրեն Ջաքարյան կոմպոզիտոր և դաշնակահարին, ամփոփիչ պատկեր ստեղծելով մեր ոճական առանձնահատկությունների, գեղագիտական հայացքների մասին:

Մ. Սարգսյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Սոֆյա Սարգսյանը ներկայացրեց Ղազարոս Սարգսյանի գործունեությունը կոնսերվատորիայի վերելքի շրջանում:

Երախտավորներ, ուն միշտ հիշում են մեծագույն սիրով և հարգանքով. Մարգարիտա Զարուբյանյան, Անահիտ Բոգ-

դանյան, Էդուարդ Փաշինյան, Ավետ Տերտերյան, երաժշտագետների գերդաստան Գեորգի Տիգրանյան, Իրինա Տիգրանյան, Ռուբեն Տերտերյան, Գասպարյանների ընտանիք, Գայանե Զեքուրյան:

Որպես հավելում այս շաբթյան, վերջերս տեղի ունեցավ Լուսինե Սահակյանի հեղինակած՝ երաժշտագետ, կոմպոզիտոր Ռոբերտ Աթանասյանի նվիրված գրքի շնորհանդեսը:

Գիտաժողովի օրակարգում տեղ գտած գեկույցներից մի քանիսում ներկայացվեց մեր ժամանակների համար շատ արդիական թեմա:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանը ներկայացրեց երաժշտական վերլուծության որոշ մեր մեթոդներ, մասնավորապես, Humdrum հակարգչային վերլուծության ծրագիրը: Այն հիմնականում կատարում է որոշակի ինտերպոլների, մոտիվների, հնչյունների հաշվարկումներ: Այդ հնարավորությունները Տաթևիկ Շախկուլյանը ցուցադրեց «Սասնա Ծռեր» էպոսի երգերի օրինակով:

Թվային տեխնոլոգիաներին անդրադարձավ նաև Սամարայի մշակույթի պետական ինստիտուտի ժողովրդական գործիքների ամբիոնի դոցենտ Նատալյա Ռուսանովան:



Լուսինե Սահակյան, Ռուզաննա Ստեփանյան, Արմեն Բուդաղյան, Նինա Զակարյան, Միքայիլյան, Շուկինար Սուսիսյան, Ժամնա Զուրաբյան, Գոհար Շադոյան, Նունե Աթանասյան, Վահագն Վարդանյան, Նարինե Ավետիսյան, Արցախի Վալիֆորնիայի (USC) թորնթոնի երաժշտական դպրոցի պրոֆեսորի ասիստենտ, Մարիաննա Տիգրանյան

«Արժեքներով անսպառ» ստեղծում ենք ապագան» միջազգային գիտաժողովի գեկույցները տարբեր էին և հետաքրքիր: Երաժշտությունն իր պատմությունն ունի, որ արժանագրում ու հավերժին են հանձնում երաժշտագետները: Տվյալ հոդվածում անցած գիտաժողովին անդրադառնալով փորձեցինք մեր համեստ ներդրումն ունենալ մշակութային նախաձեռնություններում և արժեքներով անցյալը՝ ստեղծենք ապագան:

ՄԻՄԵԼԱ ՆԱՄՎԱՐ
Երաժշտագետ,
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի
անվ. երաժշտամանկավարժական թղեքի
2-րդ կուրսի ուսանող

«Հայկական Հզոր խմբակ». Բաբաջանյանը և ընկերները

Ինչպես հայտնի է, 2020 և 2021 թվականներին լրացավ «Հայկական Հզոր խմբակ»-ի անդամներ՝ հինգ հայ նշանավոր կոմպոզիտորների՝ Արմեն Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի, Ալեքսանդր Զարուբյանյանի, Ղազարոս Սարգսյանի և Ադամ Խուրդյանի 100-ամյա հոբելյանները: «Հայկական հզոր խմբակ» անվանումը տվեց ռուս ճանաչված երաժշտագետ Յուրի Կորնեյ, համեմատելով այն հայտնի հինգ ռուս կոմպոզիտորներից բաղկացած համագործակցության, այն է՝ «Հզոր խմբակ»-ի հետ: Նրանց անվանում են նաև «Հզոր հնգյակ» կամ «հետխառնատրյանական սերունդ»: Ծավալելով բազմաբնույթ բեղուն գործունեություն 40-ական թվականների կեսերից սկսած, այս հինգ տաղանդաշատ, վառ և ինքնատիպ անհատականությունները կերտեցին և հարստացրեցին հայկական ազգային երաժշտական մշակույթը և թողեցին խոշոր ներդրում հայկական երաժշտական իրականության մեջ:

Ինչպես Միլի Ալեքսեևիչ Բալակիրը հանդիսացավ ռուսական Հզոր խմբակի ղեկավար, մեծատառով ուսուցիչ, այնպես էլ «Հայկական հնգյակ»-ի համար անգնահատելի դեր ուներ Արամ Խաչատրյանի մեծ ավանդը երիտասարդ կոմպոզիտորների ձևավորման գործում: Կարևոր էր ամեն ինչ. մեծ կոմպոզիտորի տված խորհուրդները, հայրաբարո վերաբերմունքը, ազգային հանդեպ մեծ հարգանք սերմանելը:

Հարկ է նշել և մեկ կոմպոզիտորի ներդրումը, ով մեծ հետաքրքրությամբ էր հետևում խմբակի անդամների գործունեությանը, փորձում օգնել մասնագիտական հարցերում և միաժամանակ լինել ավագ ընկեր՝ հայտնի խորհրդային կոմպոզիտոր Դմիտրի Դմիտրիևիչ Շոստակովիչն էր: Շոստակովիչի դասարանում է սովորել Ղազարոս Սարգսյանը: Ի

միջի այլոց կա մի հետաքրքիր դրվագ մեծ կոմպոզիտորի կյանքից: 1964 թվականին հերթական անգամ Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տունն այցելելուց հետո, ճա, վերադառնալով Երևան, հյուր է գնում Մարտիրոս Սարգսյանին: Երկու տաղանդների հանդիպման արդյունքը եղավ Շոստակովիչի դիմանկարը և խմբակային լուսանկարի ի հիշատակ հանդիպման: Հնգյակի անդամների հետ ընկերությունը և մտերմությունը շարունակվեց մինչև մեծ կոմպոզիտորի կյանքի վերջին տարիները:

Սակայն վերադառնալով «Հնգյակ»-ի կոմպոզիտորներին: Հինգ կոմպոզիտորների բազմաժանր, երբեմն XX դարի երաժշտական գրելաճին համահունչ ստեղծագործություններն արդեն իսկ համարվում են ազգային երաժշտական մշակույթի դասական բաժին կազմող երկերից և պատվով են ներկայացնում հայ երաժշտությունն աշխարհին: Կոմպոզիտորների ստեղծագործությունների մասին գրվում են հոդվածներ և հետազոտություններ, հեղինակների մասին՝ մենագրություններ, մեծ հանդիսավորությամբ նշվում են նրանց հոբելյանները: Լույս են ընծայվել նրանց հուշագրությունները, որոնք հանդիսանում են մի ամբողջ դարաշրջանի փաստացի արձանագրություններ: Իհարկե, մեծ ցանկություն կա տեսնել մեր գրքերի հրատարակումներ, կապված «Հնգյակ»-ի կոմպոզիտորների կյանքի և գործունեության հետ...

«Հնգյակ»-ի կոմպոզիտորների մեր ստեղծագործական ձեռքբերումները և բեղուն աշխատանքը չխաթարեց իրենց կարևոր ներդրումն ունենալ ազգային կատարողական, երաժշտահասարակական, մանկավարժական ասպարեզներում: Նշենք Սերգեյ Բաբաջանյանի փայլուն դաշնակահար լինելը: Նա մեծ հետք թողեց ոչ միայն հայ այլև

համաշխարհային կատարողական արվեստի մշակույթի զարգացման գործում:

Էդվարդ Միրզոյանի ավելի քան 30 տարվա ջանասեր և նվիրական աշխատանքը որպես Հայաստանի Կոմպոզիտորների միության նախագահ, ուն շնորհիվ ճանապարհի հարթվեց բազմաթիվ կոմպոզիտորների սերունդների համար:

Ղազարոս Սարգսյանի նվիրյալ և պատասխանատու 26-ամյա գործունեությունը՝ որպես Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղեկավար:

Ալեքսանդր Զարուբյանյանի երկար տարիների աշխատանքը՝ որպես Հայաստանի ֆիլիարմոնիայի գեղարվեստական ղեկավար, ով մեծ երաժշտի խորը իմացությամբ մասնակցեց հայրենի երկրի երաժշտական կյանքի կազմակերպմանը:

Ադամ Խուրդյանի կարևոր ներդրումը Հայաստանի և արտասահմանյան երկրների ստեղծագործական կապերի հաստատման և ամրապնդման գործում:

Ի դեպ, առանձին տողով հարկ է նշել Էդվարդ Միրզոյանի և Ղազարոս Սարգսյանի մանկավարժական մեծ ավանդը հայ կոմպոզիտորների մեր սերունդների դաստիարակման գործում, ինչը խոսում է նրանց բարձր տաղանդի, պատասխանատվության և նվիրումի դրսևորման մասին: Միրզոյանի ստեղծագործական դասարանն են ավարտել Ստեփան Ջրբաշյանը, Ջիվան Տեր-Թադևոսյանը, Կոնստանտին Օրբելյանը, Խաչատուր Ավետիսյանը, Ավետ Տերտերյանը, Մարտին Վարդապարյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, Լևոն Զառչյանը և շատ ուրիշներ:



ԵՊԿ-Ի ՎՈՐՈՅԱԼ

1 Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղեկավար, պրոֆեսոր Սոֆա Զովհաննիսյանը նոյեմբերի 29-ին ընդունել է Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույտին:

Հանդիպման ընթացքում ԵՊԿ ղեկավարի կողմից ներկայացվեցին բուհի ընթացիկ նախագծերը, կրթական ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքները:

Հանդիպմանը ներկա էին նաև ԵՊԿ Ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Զովհաննիսյանը և Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Արմեն Բաղդասարյանը:

Հանդիպման ընթացքում Արամ Զովհաննիսյանը նշեց, որ ֆրանսիական երաժշտությունը կազմում է կոնսերվատորիայի կրթական և կատարողական ծրագրերի անբաժան մասը: Իսկ Արմեն Բաղդասարյանը շնորհակալություն հայտնեց տիկին Դեսպանին ԵՊԿ ֆրանսերեն լեզվի դասախոս Լիլյա Ստեփանյանին աջակցության համար (քաղաք Վիշի մասնագիտական վերապատրաստման) և ակնարկեց այն փաստը, որ կոնսերվատորիան շահագրգռված է մասնակցելու Ֆրանկոֆոնիայի մշակութային ծրագրերին և արդեն իսկ ունի երաժշտության օրվա և Ֆրանկոֆոնիայի միամսյակի շրջանակներում կազմակերպված համերգների պրոտֆոլիո:

Դեսպան Անն Լույն իր հերթին նշեց կոնսերվատորիայի դերը դասական և արդի ֆրանսիացի կոմպոզիտորների ժառանգությունը լուսաբանելու գործում և հայտնեց իր պատրաստակամությունն աջակցելու դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացմանը և օժանդակելու ֆրանսիական կոնսերվատորիաների հետ կապերի հաստատունը:

ԵՊԿ Օպերային ստուդիան վերջերս կայացավ Կոնսերվատորիայի բարեկամների հիմնադրամի և բուհի առա-



Հայկ Վարդանյան



«Գեղարդ» երգչախումբ

ջին start-up-ի՝ Yerevan Music Hub-ի շնորհանդեսային երեկոն:

Միջոցառմանը ներկա էին մեկենասներ, գործընկերներ, գործարար աշխարհի և դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, ինչպես նաև արվեստի ոլորտի մի շարք ներկայացուցիչներ:

Շնորհանդեսի ընթացքում հիմնադրամի տնօրեն Հայկ

Վարդանյանը հյուրերին ներկայացրեց կոնսերվատորիայի հետ կապված հիմնադրամի և Yerevan Music Hub-ի տեսլականը:

Շնորհանդեսին հաջորդեց այլընտրանքային ձևաչափով համերգ, որի ընթացքում մասնակիցները և ունկնդիրները տեղերով փոխվել էին՝ կատարումները հնչեցին դահլիճից, իսկ ունկնդիրը բեմում էր:

ԵՊԿ ղեկավարի որոշմամբ ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու Շովինար Մովսիսյանը արժանացավ Կոմիտասյան հուշամեդալի:



Շովինար Մովսիսյան

Շովինար Չալոյանի դասախոսությունները

«Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

Սկիզբը նախորդ համարում

XV դարից աստիճանաբար նվազում է գեղագիտական, փիլիսոփայական մտքի զարգացումը, որը հետևանք էր երկրի սոցիալ, քաղաքական բարդ կացության՝ տարածքների կորուստ, գաղութների ստեղծում և այլն: XVII դարից նկատվում է աշխուժություն հին և նոր մշակութային կենտրոններում, բացվում են դպրոցներ, որտեղ ուսումնասիրում են աստվածաբանություն, հայկական մշակույթի պատմություն, փիլիսոփայության ժառանգություն, զբաղվում են թարգմանություններով, կազմում են բառարաններ:

Միջնադարյան պատմության մեջ նշանակալի տեղ է գրավում «Վարդապետ Առաքել Դավրիժեցու պատմությունը» մեծածավալ աշխատությունը, որում ընդգրկված են 1602-1662 թվականների հիմնական իրադարձությունները և գեղագիտության ձևակերպումները: Անհատականացնելով մարդուն՝ Դավրիժեցին նորովի է մոտենում գեղագիտական արժեքներին, փորձում արվեստում տեսնել իրական մարդկանց և հասկանալ նրանց էությունը: Նա գրում է. «Եթե պատկերվում է որևէ ազգի ներկայացուցիչ՝ պարսիկ կամ հայ, եթովպացի կամ հնդիկ, ֆրանսիացի կամ ռուս, կամ էլ վրացի՝ իրենց ազգային յուրահատկություններով, ապա նրանք կամ ծիծաղում են, կամ բարկացած են, տխուր են, կամ էլ գինոված, հորանջելիս կամ առույգ, կամ պատրաստվելիս պատերազմելու, ամեն դեպքում նրանք ազգային ճշգրիտ և որոշակի կերպար ունեն» (Վարդապետ Առաքել Դավրիժեցու պատմությունը: Վաղարշապատ, 1896, էջ 412):

Դավրիժեցին ծանոթացնում է Նոր Զուղայի գեղանկարչական դպրոցին: Գեղանկարչության մեջ առաջնություն տալով դիմանկարին՝ համարում է, որ քնարական պոեզիայից հետո այն ամենավառ ձևով է պատկերում հասարակության տրամադրությունները, գաղափարական պայքարը: Թորոս Ռուսիկոնցի հետո դիմանկարը դառնում է աշխարհիկ արվեստի արտահայտիչը:

Իր գեղագիտական դրույթներում Դավրիժեցին փորձում է կրթության և դաստիարակության միջոցով կատարելագործել դարերից ժառանգած մշակույթը: Նրա տեսությունը հենվում է Նոր Զուղայի հայ նկարչական դպրոցի վրա, որտեղ շեշտը դրվում է ճշմարտացի արվեստի վրա:

Նշենք, որ Դավրիժեցու «Պատմության...» XXVIII գլուխը նվիրված է Լվովի հայ գաղթօջախին, որը, հիմնվելով XIII դարում, հասնում է զարգացման բարձր աստիճանին և XV-XVIII դարերում դառնում է եվրոպայում ամենաձևավորված հայ մշակութային կենտրոնը Վենետիկից և Ամստերդամից հետո:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում *Սիմոն Զուղայեցու (մահ. 1657 թ.)*՝ մեծ մտածողի, մանկավարժի, հասարակական գործչի փիլիսոփայական մեկնաբանումները: Նա հեղինակ է «Գիրք տրամաբանության», «Ամհատի արարումը» և այլ աշխատությունների: Վերջինը գեղագիտության համար ունեցավ առաջնային նշանակություն:

Զուղայեցին իդեալիստ է, մոմիալիստ և սենսուալիստ: Նրա համար առաջնայինն աստվածային համակարգն է, բնությունը ընկալվում է մետաֆիզիկորեն՝ առաջնություն տալով առարկային և նրա շարժմանը: Մարդ արարածը բնության մի մասնիկն է՝ ստեղծված Աստծու կողմից, ըստ բնության օրենքների, գոյատևող մարմնով և ոգով: Հետևելով Արիստոտելին՝ Զուղայեցին մարդկային ոգին բաժանում է երեք որակի՝ բուսական, զգացմունքային և դատողական: Նա գրում է. «Ամհատի ուժը նրա դատողության մեջ է, քանի որ մարդը դատող է և ճանաչող» (Սիմոն Զուղայեցի Գիրք տրամաբանության: Կոստանդնուպոլիս, 1794, էջ 157): Ըստ նրա՝ անձի առաջնային հատկությունը ճանաչելու կարողությունն է: Դատողական ճանաչողությանը նախորդում է զգացմունքը, որը Զուղայեցին բաժանում է արտաքինի և ներքինի: Վերջինն իր մեջ ունի ընկալում, երևակայություն, կարծիք, հիշողություն և դատողություն: Դատողական ճանաչումը հնարավոր է դառնում շնորհիվ հինգ զգայարանների՝ տեսողության, լսողության, շոշափելիքի, հոտառության և համի:

Զուղայեցին, ընդունելով անհատի և դատողական, և զգացմունքային կարողությունները, միևնույն ժամանակ ընդգծում է նրա և բարոյական, և ստեղծագործական հնարավորությունները:

Նույն ուղղությամբ էր գործում նաև *Ստեփանոս Լեհացին*՝ XVII դարի ամենաակնառու հայ փիլիսոփա: Սկզբում գործելով Լվովի հայ գաղութում՝ նա հաստատվեց Եջմիածնում, որտեղ և մահացավ 1687 թ.՝ թողնելով հարուստ հոգևոր ժառանգություն: Ինչպես և Զուղայեցին, նա կարծում էր, որ տիեզերքը և մարդն աստվածային ծագում ունեն, և որ մարդկային հատկությունները՝ ճանաչումը և դատողությունը, աստվածային պարզ են: Ըստ Լեհացու՝ գործում են երեք օրենքներ՝ հավերժ կամ աստվածային, մշտական, որոնք համապատասխանում են բնական օրենքներին, և ըստ նրանց գոյատևում է մարդը: Վերջինը՝ երրորդ օրենքը, մարդկայինն է, որն անհրաժեշտ է խաղաղություն հաստատելու համար, այն կարող է չարի դեմ պայքարում դառնալ ստիպողական: Այս դեպքում շատ օգտակար կլինեն խրատները և ծնողական խորհուրդները: Լեհացին գրում է, որ մարդն իր էությանը բարի է, չնայած լինում են և չար փաստեր, որոնք հատուկ

չեն մարդուն, որի կամքն ուղղված է բարի գործերի իրականացմանը: Լեհացին արվեստի հիմնարկները համարում է անհատի բարի կամքը:

Ստեփանոս Լեհացին ավելի ճշգրիտ, քան Սիմոն Զուղայեցին, ձևակերպեց իր հայացքների մատերիալիստական ուղղվածությունը: Նրա փիլիսոփայական մեկնաբանություններում անհատը հանդես է գալիս ավելի որոշակի և գործունյա: Մեծ է Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական, գեղագիտական գործունեության դերը: Նա հայտնի էր որպես նկարիչ: Նրա վրձինն են պատկանում Եջմիածնի Մայր տաճարի տասներկու Առաքյալների պատկերները: «Լեքսիկոն» փիլիսոփայական բառարանն առաջին փորձն էր՝ բացատրականներ տալու հայ և եվրոպական փիլիսոփայական մտքի մասին: «Լեքսիկոն» բացատրական բառարանը ընդգրկում է նաև գեղագիտության ոլորտը:

Գեղեցիկը, որպես գեղագիտական հիմնարկ էր կատեգորիա, Լեհացին դիտարկում էր տարբեր տեսանկյուններից՝ մեծ տեղ տալով հեղոնիստական գործառնությանը: Նա գրում է, որ գեղեցիկը կարիք ունի ամբողջականության, ներդաշնակության և պարզության: Ըստ նրա՝ մեծ է գեղեցիկի կապն իմացության գործընթացի հետ: Որպես լուսավորիչ՝ Լեհացին գեղեցիկը և բարին արժեքավորում է ամբողջության մեջ: Գեղեցիկը տեսողական է և լսողական: Ըստ նրա՝ գեղեցիկը ճանաչողական հաճույք է:

Հայտնի են Լեհացու՝ Արիստոտելի «Մետաֆիզիկա», Ֆլավիոսի «Հրեական պատերազմի պատմություն» աշխատությունների թարգմանությունները: Նա «Ղուրանի» հայերեն առաջին թարգմանիչն էր:

Ստեփանոս Լեհացին փորձում է ամփոփել գեղագիտությունը և փիլիսոփայությունը եզնիկ Կողբացուց մինչև XVII դարը ներառյալ: Նա ճանաչվեց որպես հայկական Միջնադարի վերջին խոշոր ներկայացուցիչ: Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանի գեղագիտական միտքը ձևավորվել է հիմնականում հելլենիստական ավանդույթների ներքո՝ իր վրա կրելով նաև քրիստոնեական գաղափարախոսության հսկա ազդեցությունը:

Հարունակելի

ՇՈՎԻՆԱՐ ՉԱԼՈՅԱՆ

Գեղագիտության պատմություն գրքից,

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆԸ

Ալեքսանդր Սպենդիարյանի 150 ամյակին նվիրված միջոցառումների շարքը

1 Ալեքսանդր Սպենդիարյանը հայ երաժշտության մեծանուն գործիչներից մեկն է, առանց որի այնպես չէր զարգանա հայկական սիմֆոնիզմը, ինչպես որ զարգացավ նրա շնորհիվ: Այս տարի մենք նշում ենք անվանի կոմպոզիտորի 150-ամյակը: Այն նշվում է ոչ միայն Հայաստանում այլև արտասահմանում՝ Պետերբուրգում, Սուդակում, Թիֆլիսում, Վիեննայում, Լոնդոնում:

Սպենդիարյանի երևանում անցկացրած վերջին չորս տարիներն արժեվորեցին ու լրացրեցին հայաստանյան երաժշտական կյանքը: Իսկ կոմպոզիտորի անունը կրող երևանի առաջին թանգարանի ամեն մի փոքր անկյունում ամփոփված մեծ պատմություններն իրենց ընդգրկում բովանդակությամբ առանձին ուսումնասիրության նյութ են հանդիսանում:

Կոմպոզիտորի կյանքի, գործունեության ընթացքում անմասն չեն մնացել նրա կողմից հաճախակի կազմակերպվող բազմաթիվ հանդիպումները մտավորականների հետ, որոնցում բարձրաձայնվող խնդիրները, քննարկումներն ակամայից վերածվում էին տոնախմբության:

Շարունակելով ավանդույթն այսօր, թանգարանն իր հյուրընկալ դերերն է բացում բոլորի առջև: Դրանցից մեկը այս տարվա առատ միջոցառումների շարքն էր, որը մտահղացվել է Հայաստանում Սպենդիարյանի անունը կրող երեք մշակույթային հաստատությունների ջանքերով՝ Երևանի օպերային և բալետի ազգային ակադեմիական թատրոնի, երաժշտական դպրոցի և տուն-թանգարանի:

2021 թ. սկզբից մինչև այսօր մեծ շուքով տոնվում է կոմպոզիտորի 150-ամյակը: Տարին ողողված էր սպենդիարյանական երաժշտությամբ. բացօթյա համերգ-ֆլեշմոբեր, երաժշտական երկօրյա փառատոն Գյումրիում, գիտաժողով, ֆոտոմոնթաժ, սիմֆոնիկ երկու համերգ Հայաստանի ֆիլհարմոնիկ, Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբերի մասնակցությամբ Երևանում, Սպենդիարյանական օրեր Պետերբուրգում, Սուդակում, Թիֆլիսում, Վիեննայում, Լոնդոնում: Ընտրված վայրերը պատահական չեն: Դրանցից մի քանիսն անմիջական կապ ունեն կոմպոզիտորի կյանքի, գեղագիտական հայացքների, երկերի երաժշտական արտահայտամիջոցների ձևավորման գործում:

Միջոցառումների շարքից առանձնացրել ենք մի քանիսը:

Ապրիլի 15-ին տեղի ունեցավ Սպենդիարյանի 150-ամյակին նվիրված առաջին գիտաժողովը, որը նախաձեռնել էր ՀՀ վաստակավոր գործիչ, երաժշտագետ, պրոֆեսոր Արմեն Բուդալյանը: Երևանի պետական Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական և Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական քոլեջների երաժշտագետ ուսանողները յուրօրինակ ելույթներ էին պատրաստել. կլոր սեղանի շուրջ դասախոսների ղեկավարությամբ ինտերակտիվ ձևաչափով ուսանողները ներկայացրեցին «Սպենդիարյանի հայաստանյան անդրանիկ համերգը», «Սպենդիարյանը և Մոսկվայի Հայ մշակույթի տունը» խորագրերով գեկույցները: Հարկ է նշել, որ սույն տողերի հեղինակը նույնպես մասնակ-



Արմեն Բուդալյան, «Ա. Սպենդիարյան-150» գիտաժողովի մասնակիցներ, Մարինե Օթարյան, Նինա Հակոբյան (Արցախի Հանրապետություն), Հերմինե Հարությունյան, Աննա Խաչատրյան, Սաթենիկ Ղափանյան, Արմենուհի Բաբոյան

ցեց գիտաժողովի, որն դարձավ առաջին մասնագիտական փորձն երաժշտագիտության ասպարեզում:

Գիտաժողովի հյուրերն էին նաև Գյումրու Զ.Կարա-Մուր-



Էվելինա Մաթևոսյան, Սամվել Սիրունյան, Սիմեոն Նամակար, Մանե Սվազյան

գալի անվ. և Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական քոլեջների դասախոսները, ովքեր անդրադարձան Սպենդիարյանի գործունեությանը որպես դաշնակահար, ու-

սումնասիրության հիմք ընդունելով մեծ դիրիժոր և անգերազանցելի սպենդիարյանագետ Գեորգի Բուդալյանի հուշերը:

Տուն-թանգարանի կողմից ներկայացվեց «Ալմաստ» օպերայի ստեղծման և բեմադրությունների պատմությունը,



Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն՝ Մարինե Օթարյան

ցուցադրվեց «Իրականացած երազանք» խորագրով փաստագրական ֆիլմը, որն ընդգրկվել է «Ռիմսկի-Կորսակովի օր» համառոտագրված փառատոնի նախագծերի շարքում:

Համագործակցությունը շարունակվեց սեպտեմբերի 4-ին ԵՊԿ Գյումրու մասնաճյուղում կայացած հանդիպմամբ: «Սպենդիարյանը Հայաստանում» խորագրով ստորագրվեց հուշագիր տուն-թանգարանի և ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի միջև, այնուհետև Մարինե Օթարյանի և ԵՊԿ Գյումրու մաս-



նաճյուղի տնօրեն Հասմիկ Հարությունյանի կողմից ներկայացվեց դասախոսություն:


Ապրիլի 11-ին Սպենդիարյանի հիշատակի օրվա առթիվ արվեստագետները, պաշտոնյաներն ու Սպենդիարյանի երաժշտության երկրպագուները կոմպոզիտորի ստեղծագործությունների ներքո ծաղիկներ խոնարհեցին նրա շիրիմին:

Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն վաստա-



Հիշատակի օր՝ նվիրված Ա. Սպենդիարյանին. ծախից՝ Տ. Մանուկյան, Մ. Օթարյան, Հ. Պապյան, Մ. Գրիգորյան

կաշատ գոչծիչ Մարինե Օթարյանը լրագրողների հետ հարցազրույցում նշեց, որ 1928 թվականի մայիսի 7-ին, երբ կոմպոզիտորը կնքել է իր մահկանացուն, Ալեքսանդր Թամանյանն անձամբ էր մշակել ընկերոջ շիրիմի վարդերն ու հոգ տարել, որ դրանք միշտ դալար մնան: Որոշվեց վերականգնել այդ ավանդույթն՝ իրականացնելով վարդատունկ կոմպոզիտորի շիրիմին: Այն իրականացրեցին կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանուկյանը, օպերային մենբերգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ Հաս-



Վարդատունկ կոմպոզիտորի շիրիմին

միկ Պապյանը, Արմեն Բուդալյանը ինչպես նաև արվեստի

այլ անվանի գործիչներ:

Հունիսի 14-ին «ՀայՓոստ» ընկերությունը շրջանառության մեջ դրեց «Աշխարհահռչակ հայեր. Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակը» թեմային նվիրված մեկ նամականիշով գեղաթերթիկ: Այդ գեղաթերթիկի դիզայնի հեղինակն է՝ Ռեն Սահակյանը: Գեղաթերթիկի վրա պատկերված է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը, կոմպոզիտորի արձանը, իր ստորագրությունն ու «150-ԱՄՅԱԿ» գրառումը՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Ստորին հատվածում



Հորեկյանական նամականիշի մարման արարողություն



տեղադրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի լոգոն, քանի որ կոմպոզիտորի ծննդյան 150-ամյա հոբելյանը 2020 թվականից ընդգրկված էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների օրացույցում:

Հունիսի 15-ին՝ Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի, Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Արամ Խաչատրյան համերգասրահում տոնվեց կոմպոզիտորի հոբելյանական տարին: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ոսկե մեդալով պարգևատրվեց Արմեն Բուդալյանը, ում ներդրումը հայ մշակույթի զարգացման գործում անգնահատելի է: Նվագախմբում գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Էդուարդ Թուփչյանի ղեկավարությամբ կատարեց «Ալմաստ» օպերայից «Պարսկական քալերգ»-ը, «Դրիմյան Էգբիզներ» սիմֆոնիկ սյուիտի առաջին տետրը: Երեկոյի ընթացքում հնչեցին նաև կոմպոզիտորի ռոմանսները մենբերգիչ Նավասարդ Հակոբյանի (բարիտոն) կատարմամբ: Համերգի ավարտին հնչեց «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը: Մոտ ապագայում կիրառարակվի նաև ձայնասկավառակ՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ



Հորեկյանական համերգ՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ, դիրիժոր՝ Է. Թուփչյան

նվագախմբի ձայնագրությամբ:

Հունիսի 29-ին կայացավ Գեորգի Բուդալյանի «Դիտարկուններ Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի գործիքավորման շուրջ» գրքի շնորհանդեսը: Աշխատությունն ստեղծել է՝ տասնամյակներ շարունակ ղեկավարելով և ուսումնասիրելով «Ալմաստ» օպերան: Այն իրատարակել է Սպենդիարյանի տուն-թանգարանը («Էդիթ Պրինտ»), գլխավոր խմբագիր՝ ԵՊԿ պրոֆեսոր Ալինա Փախլանյան: Գիրքն արժեքավոր ուղեցույց է Սպենդիարյանի ստեղծագործությունը հետազոտողների համար:

Դրան հաջորդեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ սեպտեմբերի 5-ին կայացած

Ալեքսանդր Սպենդիարյանի 150 ամյակին նվիրված միջոցառումների շարքը

Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի բակի բացօդյա համերգը: Միջոցառմանը մասնակցեցին ինչպես անվանի՝ դաշնակահարներ՝ Սվետլանա Նավասարդյանը, Հայկ Մելիքյանը, օպերային մեներգիչներ՝ Բարսեղ Թումանյանը, Մագդա Սկրտչյանը, այնպես էլ պատանի, սակայն արդեն համաշխարհային բեմեր նվաճած երաժիշտներ: Նրանց թվում էին Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտական դպրոցի սան Աիդա Ավանեսյանը, «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամները. գեղարվեստական ղեկավար՝ Արմեն Բաբախանյան: Համերգային ծրագրում ներառված էին կոմպոզիտորի կամերային ստեղծագործությունները: «Եվրոպական ժառանգության օրեր»-ի շրջանակում սեպտեմբերի 25-ին, Սպենդիարյանի տուն-թանգարանի, Գրատյուբյան թանգարանի և Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի համատեղ նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանի մեծ ցուցասրահում բացվեց «Հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսը:



Ա ն դ ր ա -
դ ա ռ ա ն ք
նաև հոբելյա-
նական միջո-
ցառումների
ար տ ա ս հ-
մանյան շար-
քին: Հոկտեմ-
բերի 16-ին
Լոնդոնի Քեն-
սինգթոն թա-

գավորական համայնքի Սբ. Քաթերին եկեղեցում կայա-
ցավ հոբելյանական համերգ և ցուցահանդես՝ նվիրված
Ալեքսանդր Սպենդի-
արյանի ծննդյան 150
և Առնո Բաբաջանյա-
նի 100-ամյակներին:
Միջոցառումը կազ-
մակերպվել էր «Քլին-
գեն» երգչախմբի ու
մշակութային ասոցի-
ացիայի և Նրա գե-
ղարվեստական ղե-
կավար ու դիրիժոր
Սիփան Օլախի ջան-
քերով՝ Մեծ Բրիտա-
նիայի և Հյուսիսային
Իռլանդիայի Միացյալ
Թագավորությունում՝
Հայաստանի Հանրա-
պետության դեսպա-
նատան հովանու ներ-
քո: Համերգին մաս-
նակցեցին միջազգա-
յին ճանաչում ունեցող շատ երաժիշտներ: Հարկ է նշել, որ
համերգային ծրագրում ընդգրկված Ա. Սպենդիարյանի
«Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ ստեղծագործությունը
Միացյալ Թագավորությունում հնչեց առաջին անգամ:
Նոյեմբերի 6-ին ՀՀ դեսպանության և Ավստրիայի Հայ
Առաքելական եկեղեցական համայնքի վարչության աջակ-
ցությամբ Լոնդոնյան համերգը «ստեղծագործական» Ավստրիա՝
Վիեննայի "Antonio Vivaldi" համերգաբարի:
Պատահական չէին նաև սպենդիարյանական օրերը
Թբիլիսիում: 1916 թ. կոմպոզիտորի առաջին այցը Թիֆլիս
եղավ ճակատագրական: Երկու համաճարների՝ Ալեքսանդր
Սպենդիարյանի և Հովհաննես Թումանյանի հանդիպումը
ծնունդ տվեց «Ալմաստ»-ին, որի պրեմիերայով էլ 1933 թ.
բացվեց Երևանի օպերային թատրոնը: Հոկտեմբերի 23-24-
ը Թբիլիսում նույնպես անցկացվեցին հոբելյանական միջո-
ցառումներ: «Ստեղծագործական երկրորդ կյանք. Թիֆլիս»
խորագրի ներքո «Հայկրտ» կենտրոնում ներկայացվեցին
ուղիղ 105 տարի առաջ կոմպոզիտորի և բանաստեղծ Հով-
հաննես Թումանյանի հանդիպման մանրամասները, ինչ-
պես նաև վրաց մշակութային գործիչների հետ Նրա ունե-
ցած ստեղծագործական ու բարեկամական հարաբերու-



թյունները:
Նոյեմբերի 1-ին լրացավ մեր մեծանուն կոմպոզիտորի
ծննդյան 151-ամյակը: Սակայն չդադարեց կազմակերպված
միջոցառումների շարքը: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից
Սպենդիարյանի տուն-թանգարանին հանձնվեց հայ մեծ
դասականի 150-ամյակի հոբելյանական հուշադրամ:



Համերգներ կայացան Սանկտ-Պետերբուրգի Ռիմսկի-
Կորսակովի տուն-թանգարանում, Լոնդոնում, իսկ ղեկտեմ-
բերի 14-16-ը տեղի կունենա միջազգային գիտաժողով
Տուն-թանգարանի, Կոմպոզիտորների միության և Գիտու-
թյունների Ազգային Ակադեմիայի Արվեստի ինստիտուտի
մասնակցությամբ: Թանգարանի գիտաշխատողները ՅՈՒ-
ՆԵՍԿՈ-ի հովանու ներքո նախաձեռնել են հայերեն և անգ-
լերեն լեզուներով ինֆորմացիոն գիրք՝ ժամանակագրա-
կան, անհատների հետ համագործակցությունների հաջոր-
դական նկարագրությամբ, որն առաջիկայում լույս կտեսնի:
Վերջում հավելենք, որ մեծ ակնկալիքներ ունենք կապ-
ված Նրա հետ, որ սպենդիարյանական միջոցառումները
չեն դադարի նաև հաջորդ տարում և կստանան ավելի լայն
տարածում, քանզի մեր մեծերն արժանի են համաշխարհա-
յին ճանաչման:

ՄԱՍԿԵԼ ՍԻՐՈՒՆՅԱՆ
երաժշտագետ,
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ.
երաժշտամանկավարժական թոլեջի
2-րդ կուրսի ուսանող

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԸ ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ

«Ով լավ գիտեր Ալեքսանդր Սպենդիարյանին, չի կա-
րող նրան հիշելիս չհրժեղել: Նա արտակարգ անձնավորու-
թյուն էր՝ միշտ տարված իր ստեղծագործական մտքերով: Մինչև իսկ ամենաձանր կենսապայմաններում չէր դավա-
ճանում երաժշտությանն ու մնում էր մեծ արվեստագետ: Շատ սերտ էին Նրա կապերը XX դարի առաջին քառորդի
հետ: Ռուսաստանում լինելը, Ղրիմում թե Հայաստանում
նա մեղիկ նման ժողովրդական արվեստի ծաղիկներից
հավաքում էր այն փոշին, որը բեղմնավորում էր Նրա ար-
վեստը: Սպենդիարյանը չափազանց ինքնատիպ ստեղծա-
գործող էր: Ինչին էլ ձեռքը կաշեր, կթվար թե ինքն է հորի-
նել: Բավական է հիշել «Ալմաստ» օպերայում օգտագոր-
ծած ժողովրդական մեղեդիները, սքանչելի «Ղրիմի էս-
քիզներ»-ը, «Երևանյան էտյուդներ»-ը, «Ղայթարնա»-ն և
ուրիշներ: Դժվար է գերազանցատել Ալեքսանդր Սպենդի-
արյանի դերն իբրև պրոֆեսիոնալ երաժշտության հիմնա-
դիրներից մեկի: Ես հավատում եմ, որ հայ ժողովրդի մեջ
վառ աստղի նման միշտ կշողոշողա իմ սիրելի ընկերոջ,
անգուգական մարդու, մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր
Սպենդիարյանի անունը»:

Մարտիրոս Մարյան

2021 թվականին տեղի ունեցան բազմաթիվ միջոցա-
ռումներ, գիտաժողովներ, համերգներ նվիրված հայ դա-
սական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզի-
տոր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակին:
Հենց այդպիսի մի միջոցառում էլ տեղի ունեցավ սույն
թվականի նոյեմբերի 1-ին Ա. Սպենդիարյանի անվան օպե-
րայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:
Միջոցառման սկիզբը հայտարարեց երաժշտագետ Նո-
նա Ոսկանյանը, ով ներկայացրեց միջոցառման կազմա-
կերպիչներին, հակիրճ խոսեց անվանի կոմպոզիտորի մա-
սին և ելույթը եզրափակելով խոսքը փոխանցեց հայ կոմ-
պոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաս-
տանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սա-
թյանին: Կցանկանայի մեջբերել Նրա ելույթից մի հատ-
ված. «այն ինչ արել է Սպենդիարյանը գնահատման չա-
փանիչ չունի»:
Արամ Սաթյանից հետո ելույթ ունեցավ երաժշտագետ,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա-



յի պրոֆեսոր, ՀՀ արվեստի
վաստակավոր գործիչ Ար-
մեն Բուդաղյանը: Բազմա-
բովանդակ ելույթից հետո
պարոն Բուդաղյանը Սպեն-
դիարյանի տուն-թանգարա-
նին նվիրեց է եղուարդ Բաղ-
դասարյանի լույս տեսած
հուշերի գիրքը: Մեկնաբա-
նելով, որ եղուարդ Բաղդա-
սարյանը Սպենդիարյանի
ստեղծագործությունների
լավագույն կատարողներից
է: Բացի այս գրքից տուն-
թանգարանին հանձնվեց
նաև արվեստագետ, Հայաստանի ազգային պատկերաս-
րահի հիմնադիր Ռուբեն Դրամիսյանի հուշերի գիրքը: Այն
իր մեջ ներառում է հետաքրքիր հիշողություններ Սպենդի-
արյանի մասին, որտեղ տաղանդավոր կոմպոզիտորը ներ-
կայանում է որպես արտակարգ համեստ, բայց միևնույն
ժամանակ իր գործն առաջ տանող անձնավորություն:
Ելույթ ունեցավ նաև տուն-թանգարանի տնօրեն, կոմ-
պոզիտոր, արվեստի վաստակավոր գործիչ՝ Մարինե Տեր-
Օթարյանը: Ելույթի ընթացքում նա ասաց. «Այսօր ժամը
13:00 Հայաստան աշխարհը, Արցախ աշխարհը ապրում է
Սպենդիարյանական պահ և ամենուր հնչել են, հնչում են և
հնչելու են կոմպոզիտորի ստեղծագործությունները: Մեզ
են միացել Արցախի ռադիոն, Հայաստանի համրային ռա-
դիոն, օդանավակայանը, մետրոպոլիտենը, շատ ժաման-
ցային հաստատություններ այդ թվում նաև մոլեր, ուսում-
նական մշակութային հաստատություններ որտեղ հնչում
են կոմպոզիտորի ստեղծագործությունները, իսկ ՎԷՄ ռա-
դիոկայանն այսօր իր բոլոր հաղորդումները նվիրել է
Սպենդիարյանին»:
Ելույթի ավարտից հետո բոլոր ներկաները մոտենալով
Ալեքսանդր Սպենդիարյանի շիրմին հարգանքի տուրք
մատուցեցին կոմպոզիտորին: Այնուհետև ականատես
եղանք պարի պետական անսամբլի ելույթին, Սպենդիար-
յանի «Էնգելի»-ի ներքո, որից հետո Ա. Սպենդիարյանի
անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատ-

րոնում տեղի ունեցավ համերգ:
Համերգին հնչեցին Ա. Սպենդիարյանի, Ն. Ա. Ռիմսկի-
Կորսակովի և Ա. Վ. Ռախմանինովի ստեղծագործություն-
ները մեներգիչներ Լուսինե Օրդուխանյանի, Թամարա
Դադոյանի, Արևիկ Գյուլբուդաղյանի, Նունե Բադալյան (ՀՀ
վաստակավոր արտիստ), Գրիգոր Աբրահամյանի, Սյու-
զաննա Մելքոնյանի, Նարինե Անանիկյանի, Մագդա
Սկրտչյանի, Աննա Այվազյանի, Վարսենիկ Ավանյանի, Դի-
անա Հարությունյանի, Մերի Մովսիսյանի, Հովհաննես
Անդրեասյանի, Գրետա Բագիյանի և Հայկ Թոնգուրյանի
կատարմամբ: Նվագակցում էին կոմպոզիտորներ Օլ-
գա Խաչիկյանը (ՀՀ վաստակավոր արտիստ) և Ելենա
Վարդապարյանը:
Հարկ է նշել, որ Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան
150-ամյակին նվիրված բոլոր միջոցառումներն ունեն
դրական արձագանքներ թե՛ ուսանողության, թե՛ հասարա-
կության շրջանակում: Դրանց մեծամասնությունն իրա-
կանցվել են մի շարք ուսանողների ներգրավմամբ: Բոլոր
համերգները, գիտաժողովները, Հայաստանում և Հայաս-
տանի սահմաններից դուրս, հնարավորություն են տալիս
ավելի լավ ճանաչել մեծանուն կոմպոզիտորին, թույլ են
տալիս ձեռք բերել փորձ, մոր ծանոթություններ ու հնա-
րավորություններ տվյալ ասպարեզում և հաղթահարելով
բարդությունները նպաստում առաջընթացին:
Մենք՝ երիտասարդ երաժիշտներս կրում ենք մեծ պա-
տասխանատվություն երաժշտական ժառանգությունը յու-
րացնելու և փոխանցելու գործում:
Գնահատելի է երբ այս գլոբալիստական պայմաններում
(երբ սահմաններ չկան ու ամեն ինչ գտնվում է մի հարթու-
թյան վրա) արժեվորվում է ազգային երաժշտությունը,
փորձում են վերհիշել ու վեր հանել Նրա վառ ներկայացու-
ցիչների երաժշտական ժառանգությունը ի ցուց դնելով
ազգայինը:

ՄԱՆԵ ՍՎԱԶՅԱՆ
երաժշտագետ,
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ.
երաժշտամանկավարժական թոլեջի
2-րդ կուրսի ուսանող

ВЫПУСКНИЦА ЕГК ИМ. КОМИТАСА - ДЖУЛЬЕТТА ГАЛСТЯН: “НАДО ПЕТЬ ТАК, ЧТОБЫ ЧЕРЕЗ ДЕСЯТЬ ЛЕТ ВСПОМИНАЛИ, КАК ВЫ ПЕЛИ”



12 апреля 2012 года арцахским поклонникам классической музыки был преподнесен роскошный подарок: на сцене Дворца молодежи выступил Государственный камерный оркестр Арцаха под управлением Заслуженного артиста НКР, художественного руководителя и главного дирижера Геворга Мурадяна (ныне – Народный артист РА). В качестве солистки выступила оперная певица, лауреат многочисленных международных конкурсов Джульетта Галстян (меццо-сопрано).

Имя Джульетты Галстян широко известно мировой общественности. Выпускница Ереванской государственной консерватории им. Комитаса Д. Галстян продолжила семейные традиции, избрав путь искусства. Ее прабабушка – советская оперная певица, Народная артистка СССР Айкануш Даниелян; бабушка – известная пианистка, профессор ЕГК им. Комитаса Марианна Арутюнян; папа, артист балета и хореограф Ереванского академического театра, Народный артист Армении – Вилен Галстян.

Зная родословную знаменитости, нетрудно догадаться, что будущая профессия девочки должна была быть связана со сценой. Д. Галстян проходит обучение в Ереванкой Специальной музыкальной школе им. П.Чайковского в классе фортепиано у Р. Тандилян (профессор ЕГК им. Комитаса). А уже консерваторию завершает сразу по двум специальностям: “фортепиано” и “вокал”. Еще будучи студенткой, будущая оперная дива получает Гран-при на конкурсе им. Марии Каллас (Афины), затем Первую премию на конкурсе им. Вьетти (Верчелли). Немудрено, что талантливейшей певице предложили заключить контракт известные

итальянские театры: Оперный театр Турина (Реджио) и Венецианский оперный театр Фениче. И в первом же дебюте Д. Галстян посчастливилось выступить на одной сцене с мировыми звездами: Лучиано Паваротти, Миреллой Френи, Николаем Гяуровым.

Спев много партий сопранового репертуара, певица переходит в меццо-сопрано и свое решение объясняет желанием сыграть новые роли. Д. Галстян также занимается преподавательской деятельностью в качестве педагога по вокалу в Женевской государственной консерватории.

Живя в Швейцарии, именитая певица сегодня выступает в разных странах: Россия, Англия, Венгрия, США, Франция, Швейцария, Япония и, конечно же, Армения. В одном из интервью Д. Галстян призналась: *“Я всегда стремлюсь в Армению, всегда. Каких бы высот я ни достигла за рубежом, как бы успешно ни складывалась моя карьера за пределами Армении, я всегда жду приглашения именно из Армении. Я никогда не беру гонорара за свои выступления на родине, я знаю, что армянский зритель ждет моих выступлений”*.

Где бы ни выступала певица концерты неизменно проходят с большим успехом. То же случилось и в Степанакерте: *“Публика слушала так, что начинаешь понимать – ты принесла им то, по чему они очень скучают”*, – признается Джульетта Галстян. (Кстати, многие приезжающие к нам артисты подчеркивают, что даже в Европе сложно найти такого “молодого” и такого сопереживающего зрителя, как в Арцахе.)

И далее: *“Я спела шесть оперных арий и почувствовала, что в зале собрались образованные, понимающие толк в музыке и умеющие ценить ее люди с богатым внутренним миром”*. Во время концерта на самом деле царил атмосфера одухотворенности, некой возвышенности; благодарный

зритель слушал певицу, затаив дыхание.

Прошло около десяти лет, однако впечатления от выступления Д. Галстян, и в правду, с годами не меркнут, что сегодня и стало причиной обращения к данной статье. Покорил профессионализм, покорила эффектная внешность, покорили блестящее актерское мастерство, скромность певицы, ее мягкая армянская интонация. К большому сожалению, наряду с произведениями русских и зарубежных композиторов, не было исполнено заявленное ранее в программе концерта произведение Э. Абрамяна «Ախ, ինչ լավ է սարի վրա». По нашему мнению, произведение армянского композитора стало бы своего рода логичным, “цементирующим”, скрепляющим весь концерт материалом, и придало бы всему действию наивысшую целостность и весомость.

В заключение хотелось бы вновь вспомнить слова Джульетты Галстян: *“Степанакерт – настоящая столица, причем степанакерты очень любят свой город; улицы по вечерам многолюдны, народ гуляет, общается, везде порядок, все аккуратно, обустроено, чисто... Я поняла, что люди чувствуют себя хозяевами в своей стране”*.

Было бы большим счастьем спустя годы вновь увидеть знаменитую певицу на нашей сцене.

НИНА АКОПЯН
музыковед,

г. Степанакерт, Арцах

Использованный эл. ресурс:

1. <https://www.golosarmenii.am/article/18175/dzhuletta>
2. “Наша газета”, 19.09.2012. Н.Сикорская
3. <https://yerkramas.org/article/33421/arcaxskij-slusatel-gorazdo-teplee-i-iskrennej-evropejskogo>

«ՑԱԿՏ ՏՂՆԻՄ, ԱՐՑԱԽ»

Յոկտեմբերի 31-ին Ստեփանակերտի «Ազատամարտիկների այգում» տեղի ունեցավ ճանաչված երգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Անդրեյի նոր երգի տեսահոլովակի պրեմիերան, որը ցուցադրվեց պուրակի ամֆիթատրոնի մեծ էկրանին:

«Ցավո տանին, Արցախ» երգի տեքստի և երաժշտության հեղինակն Անդրեյն է, գործիքավորումը կատարեց Վահան Նահապետյանը: Ըստ երգչի՝ ստեղծագործությունը ծնվել է միանգամից, մի գիշերվա մեջ: Տեսահոլովակի ռեժիսորն Արսեն Եսայանն է, օպերատորը՝ Տիգրան Գասպարյանը:

Տեսահոլովակը նկարահանվել է Արցախում՝ Պատարայում, Ասկերանի պարիսպների մոտ, Ուլուքաբում, Դադիվանքում: Երգչի խոսքերով՝ տեսահոլովակում «հին ու նոր Արցախները բախվում են իրար»:



Անդրեյն մեծ կարևորություն տվեց նրան, որ հոլովակի պրեմիերան տեղի ունեցավ իր ծննդավայր Արցախում: Երգի տեսահոլովակը հասանելի է համացանցում երգչի YouTube-ի պաշտոնական էջում:

Նյութը պատրաստեց՝
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿՈՐԱՎՈՍՅԱՆԸ

<https://artsakhpress.am/arm/news/152941/cavt-tanim-arcakh-stepanakertum-kayacel-e-ergich-andrei-ergi-tesaholovaki-premieran.html>

<https://armeniasputnik.am/20211101/cavd-tanim-arcakh-ergich-andren-nvor-tesahvolvovak-e-nervakajacrel-34874920.html>
<https://www.ra.am/archives/49587/>

«Հայկական Հզոր խմբակ». Բաբաջանյանը և ընկերները

Ղազարոս Սարյանը դաստիարակել է կոմպոզիտորների մի քանի սերունդ, որոնց թվում են Տիգրան Մանսուրյանը, Ռուբեն Ալթունյանը, Ռուբեն Սարգսյանը, Վարդան Աճեմյանը, Ստեփան Լուսիկյանը, Ստեփան Ռոստոմյանը, որոնցից յուրաքանչյուրն էլ իրենից ներկայացնում է վառ, ինքնատիպ անհատականություն: Միջոցառմանի և Սարյանի ջանասեր աշխատանքի շնորհիվ ծաղկեց և ծիլեր տվեց տաղանդավոր կոմպոզիտորների նոր սերունդը:

Բայց «Հնգյակ»-ի կամ «Հզոր հնգյակ»-ի հենասյունն է կազմում ոչ միայն մի քանի համախոս սերնդակիցների ստեղծագործական և հասարակական գործունեության շուրջ առնչությունները: Այս յուրատիպ համագործակցության հիմքերը դրվեցին ավելի վաղ, ուսումնառության մանկական տարիներից սկսած, և երկարատև ընկերությունը պահպանելը հնարավորին դարձավ միայն բարոյական, մարդկային այն հատկանիշների շնորհիվ, որոնցով նրանք առաջնորդվեցին ողջ կյանքի ընթացքում:

Իսկ ամեն ինչ սկսվեց 1934 թվականին, երևանում: Ինչպես պատմում էր իր հուշերում Ալեքսանդր Հարությունյանը, երևանի կոմսերվատորիայի կոմպոզիցիայի դասարանը ղեկավարում էր հայտնի կոմպոզիտոր Սերգեյ Բարխուդարյանը: Նրա ասիստենտն էր հետաքրքիր անձնավորություն և շատ պատրաստված երաժիշտ Վարդգես Տալանը՝ Գրիգոր Տալանի՝ աշուղ Շերամի որդին: Եվ քանի որ Բարխուդարյանի հիմնական աշխատանքի վայրը գտնվում էր Թիֆլիսում, ապա դասընթացների գերակշիռ մասն անց էր կացնում Տալանը: Հարությունյանի հետ միաժամանակ կոմպոզիցիայի դասարան ընդունվեցին Առնո Բաբաջանյանը և Ղազարոս Սարյանը: Իսկ մեկ տարի անց նաև եղվարդ Միրզոյանը: Կոմպոզիտոր Վարդգես Տալանը ոչ միայն հմուտ մանկավարժ էր, այլ նաև հոգատար անձնավորություն, ով մտահոգված էր առավելագույն բացահայտել իր ուսանողների բնատուր կարողությունները, անհատականության կարևոր գծերը: Լինելով հայտնի գուսանի որդի, նա գեղջ-

կական երգի և գուսանաշուղական արվեստի մեծ գիտակ էր: Մեծ խանդավարությամբ կիսվելով իր գիտելիքներով սիրելի ուսանողների հետ, նա առաջ էր քաշում նաև մի այլ կարևոր խնդիր. ազգայինի խորքային ընկալումն իր սաների ստեղծագործություններում մեջ: 1938 թվականին Վարդգես Տալանի նախաձեռնությամբ Մոսկվայի Մշակույթի տանը հնչեցին Առնո Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի դաշնամուրային ստեղծագործությունները: Հենց այս համերգին երիտասարդներն առաջին անգամ հանդիպեցին մեծանուն Արամ Խաչատրյանին: Այս օրվանից հիմք դրվեց մեծ կոմպոզիտորի և երաժշտական ասպարեզ նոր մտած երիտասարդ կոմպոզիտորների սերտ շփմանը:

1946 թվականին, Հայրենական մեծ պատերազմից հետո, մի խումբ երիտասարդ կոմպոզիտորների՝ Բաբաջանյանին, Միրզոյանին, Խուրդյանին ուղարկեցին Մոսկվա՝ Հայաստանի մշակույթի տանը կից ստուդիայում վերապատրաստում անցնելու նպատակով: Նշենք, որ Սարյանն արդեն սովորում էր Մոսկվայի կոմսերվատորիայում: Նախնական պայմանավորվածությամբ պարապմունքները պետք է վարեր Արամ Խաչատրյանը: Սակայն խիստ ծանրաբեռնվածության պատճառով դասավանդման համար հրավիրվեց Մոսկվայի կոմսերվատորիայի պրոֆեսոր Հենրիխ Իլյիչ Լիսինսկին, վերլուծության դասախոսն էր հայտնի պրոֆեսոր Վիկտոր Ցուկկերմանը: Մոսկվայում ապրած տարիները հիմք դրեցին ոչ միայն նոր կոմպոզիտորների ի հայտ գալուն, այլ ավելի՛ մեծ և ամբասիր ընկերությանը և համագործակցությանը:

Նրանք կարողանում էին ուրախանալ միմյանց հաջողությանը և հպարտանալ նոր ձեռքբերումներով: Օրինակ, Ղազարոս Սարյանն իր մանկության ընկերոջ՝ Առնո Բաբաջանյանի մասին ասել է. *«Մարդ, որ կոչված էր ներկայացնելու մի ամբողջ ազգ»*: Իսկ շատ ենցողունալ Առնո Բաբաջանյանը պատերազմից վերադարձած իր ընկերոջ՝ Ղազարոս Սարյանի դիպլոմային աշխատանքի, կամ 1980 թվականին հնչած սիմֆոնիայի հաջողությունը տեսնելով՝ ուրախություն-

նից արտասվել է: Կարելի է անվերջ թվարկել միմյանց հանդեպ ջերմ վերաբերմունքի բազմաթիվ վկայությունները:

Այդպես, եղվարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Արամ Խուրդյանը իրենց հուշագրություններում առանձին բաժիններ տրամադրեցին ընկերներին, ներկայացնելով նրանց ստեղծագործության արժանիքները, մարդկային նկարագրերի մանրամասները, նրանց տեղի ու դերը՝ իրենց անձնական կյանքի, շրջապատի և հասարակության համար: Ինչպես նշում է ականավոր երաժշտագետ, Ղազարոս Սարյանի կինը՝ Արաքսի Սարյանը. *«Սա օրինակելի ընկերություն, մտերմություն ու բարեկամություն էր՝ նպաստավոր ոչ միայն իրենց, այլև՝ գործի, ստեղծագործական արարման համար»*: Այդպես, Հարությունյանն ու Բաբաջանյանը համահեղինակ են «Հայկական ռապսոդիա»-ի, որը միասին կատարում էին երկու դաշնամուրով: Համագործակցության մեկ այլ օրինակ է՝ այս անգամ Բաբաջանյանի և Սարյանի «Առաջին սիրո երգը» կինոֆիլմի համար երաժշտության համատեղ ստեղծումը: Հայտնի է Միրզոյանի «Արագ պարի» համատեղ կատարումը հեղինակի և Բաբաջանյանի կողմից: Պատահական չէ, որ հայ ճանաչված երաժշտական հասարակական գործիչ Գրիգորի Դոմբաևն ընկերական այս ներդաշնակությունն անվանեց «Նոր ժանր հայ երաժշտության մեջ»:

Ամփոփենք հոդվածը հայտնի գրող, գրաքննադատ Մարիետա Շահինյանի խոսքերով. *«Հայ կոմպոզիտորների այս խումբը ներկայացնում է երկարատև համագործակցության փայլուն հնգյակ՝ մարդկային և ստեղծագործական առումներով, ինչն արտացոլվել է ամեն մեկի ներաշխարհի վրա, ամեն մեկի կոմպոզիտորական կերպարի ձևավորման վրա»*:

ԼԱՌՈՒՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ, ԱՌՈՒՍՅԱԿ ԲԱՂԻՅԱՆ

բանոնահարներ,

երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ.

երաժշտամանկավարժական քոլեջի

4-րդ կուրսի ուսանողներ,

Օպերալիա 2021

Մոսկվայում կայացած «Օպերալիա» օպերային երգիչների միջազգային մրցույթում Հայաստանը ներկայացնող սուպրանո Մանե Գալոյանը արժանացել է երեք մրցանակի. գրավել է երկրորդ տեղը, ճանաչվել է «Սաթուրայի լավագույն կատարող» և հանդիսատեսի համակրանքի համար արժանացել Rolex-ի մրցանակին:



«Օպերալիա» (Operalia) օպերային երգիչների միջազգային մրցույթը դասական երգեցողության ամենահեղինակավոր մրցույթներից է: Այն հիմնադրել է 1993-ին Պլասիդո Դոմինգոն: Մրցույթի նպատակն է բացահայտել նոր օպերային տաղանդներ, նպաստել նրանց հետագա կարիերայի աճին: «Օպերալիա» մրցույթին կարող են մասնակցել 18-ից 32 տարեկան դասական երգիչներ:

Ամեն տարի Փարիզում գտնվող «Օպերալիա»-ի գլխավոր գրասենյակն ստանում է դասական երգիչների հարյուրավոր դիմումներ, որոնցից միայն 30-ից 40 հոգի են անցնում նախընտրական փուլը:

Բուն մրցույթն անց է կացվում մի քանի փուլով: Քառորդ եզրափակիչներն անց են կացվում երկու օրվա ընթացքում: Յուրաքանչյուր մասնակից քառորդ եզրափակիչի համար պետք է պատրաստի 4 արիա, որոնցից կկատարի երկուսը. մեկն ըստ կատարողի ցանկության, իսկ երկրորդը՝ ժյուրիի ընտրությամբ: Կիսաեզրափակիչ անցած 20 կատարողից եզրափակիչ են հասնում միայն 10: Քառորդ եզրափակիչներն ու կիսաեզրափակիչներն անց են կացվում դաշնամուրի նվագակցությամբ, իսկ եզրափակիչ փուլն ու գլխավոր մերթը՝ սինֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ:

Այս կարգի մրցույթին մասնակցելն ինքստիմյան պատիվ է, իսկ հաղթանակը՝ լավ սկիզբ հետագա հաջող առաջխաղացման համար: Քանի որ ժյուրին հիմնականում կազմված է աշխարհի հայտնի օպերային ռեժիսորներից, հետագայում նրանք հաճախ հրավիրում են մրցույթի մաս-



Մանե Գալոյան

նակիցներին երգելու իրենց կողմից բեմադրվող օպերային ներկայացումներին: Աշխարհահռչակ օպերային երգիչ, դիրիժոր և օպերային մենեջեր, «Օպերալիա» մրցույթի գլխավոր գեղարվեստական ղեկավար Պլասիդո Դոմինգոն նույնպես հետաքրքրված է մասնակիցների կարիերայի զարգացմամբ և հնարավորության դեպքում աջակցում է երիտասարդ երգիչներին:

Չնայած անցած տարիների ոչ բոլոր դափնեկիրները դարձան նշանավոր արտիստներ, սակայն նրանց մեջ հանդիպում են նաև աշխարհահռչակ համբավ ձեռք բերած երգիչներ՝ մեցցո-սոպրանո Ջոյս Դիդոնատոն, տենորներ Խոսե Կուրան և Ռուանդո Վիլագոն, սոպրանոներ Ինվա Մուլան և Յուլիա Նովիկովան:

Ամեն տարի մրցույթն անց է կացվում տարբեր քաղաքներում: Անցած տարիների ընթացքում մրցույթն անց էր կացվել Փարիզում, Բորդոյում, Միլանում, Վերոնայում, Մադրիդում, Վալենսիայում, Լոնդոնում, Լիսաբոնում, Մեխիկոյում, Ջամբուրգում, Տոկիոյում, Սան-Խուանում, Լոս-Անջելոսում, Վաշինգտոնում, Քվեբեկում և այլն:

2021-ին մրցույթն անցավ անցկացվեց Մոսկվայում: Այս անգամ անցկացման վայր ընտրվեց Մոսկվայի Մեծ թատրոնը (2011-ին այն անցել էր Մոսկվայի Ստանիսլավսկու և Նեմիրովիչ-Դանչենկոյի անվան երաժշտական ակադեմիական թատրոնում):

Այս տարի Առաջին մրցանակի արժանացան. լավագույն կանացի ծայր անվանակարգում՝ Վիկտորիա Կարկաչևան (մեժո-սոպրանո, Ռուսաստան), լավագույն արական ծայր անվանակարգում՝ Իվան Այոն-Ռիվասը (տենոր, Պերու):

Երկրորդ մրցանակի արժանացան. լավագույն կանացի ծայր անվանակարգում՝ Մանե Գալոյանը (սոպրանո, Հայաստան), լավագույն արական ծայր անվանակարգում՝ Ջոնա Դոսթինը (տենոր, ԱՄՆ) և Բեխգոյ Դավրոնովը (տենոր, Ուկրեյնա):

Երրորդ մրցանակի արժանացան. լավագույն կանացի ծայր անվանակարգում՝ Էմիլի Պոգորելլը (սոպրանո, ԱՄՆ), լավագույն արական ծայր անվանակարգում՝ Դմիտրի Չեբլիկովը (բարիտոն, Ռուսաստան) և Ջուստին Պարկը (բաս-բարիտոն, Հարավային Կորեա):

Բրիգիթ Նիլսոնի մրցանակի արժանացավ Վիկտորիա Կարկաչևան:

Պեպիտա Էմբիլ դե Դոմինգոյի մրցանակի արժանացավ Մանե Գալոյանը:

Դոն Պլասիդո Դոմինգո Ֆերեր մրցանակի արժանացավ Իվան Այոն-Ռիվասը:

Հանդիսատեսի համակրանք մրցանակին արժանացան Մանե Գալոյանը և Իվան Այոն-Ռիվասը:

CulturArte մրցանակի արժանացավ Եկատերինա Սանիկովան (սոպրանո, Ռուսաստան)

<https://ru.armradio.am/2021/10/25/%D0%BC%D0%B0%D0%BD>
<https://armeniasputnik.am/20211027/mane-galvojan-3-mrcanak>
<https://www.operaliacompetition.org/about/>

Նյութը պատրաստեց՝
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ

Yerevan Jazz Fest 2021




Նոյեմբերի 17-ին մեկնարկեց Ջազի հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպած հերթական «YEREVAN JAZZ FEST 2021» միջազգային 7-րդ ջազ փառատոնը:

Փառատոնը հիմնադրվել է 2015-ին Ջազի հայկական ասոցիացիայի նախագահ Կամո Մովսեսյանի կողմից և անցած տարիների ընթացքում հյուրընկալեց բազմաթիվ աշխարհահռչակ կատարողներ՝ ամերիկացի սաքսոֆոնահար և շեփորահար Չիկո Ֆրիմենին, կուբացի դաշնակահար, Գրեմմի մրցանակի թառակի դափնեկիր Գոնսալո Ռուբալկաբային, ամերիկացի ջազային երգչուհի, Գրեմմի մրցանակի կրկնակի դափնեկիր Դի Դի Բրիքիվոտերին, ամերիկացի բաս կիթառահար, Գրեմմի մրցանակի հնգակի դափնեկիր Սթենլի Քլարքին, դաշնակահար և կոմպոզիտոր, հայկական ջազի լեգենդ Սերգեյ Մանուկյանին, շվեդ վիրտուոզ կոնտրաբասահար, բաս կիթառահար, թավջութակահար Լարս Դենիելսոնին, շեփորահար և դաշնակահար Արտուրո Սանդովալին, բրիտանացի ջազ երգչուհի Ջոն Սթոունը, վրացի ջազ երգչուհի Նինո Կատամաձեին, ռուսական ջազի ներկայացուցիչներ՝ սաքսոֆոնահար Իգոր Բուտմանին և դաշնակահար Դանիլ Կրամերին և այլոց:

Այս տարի նույնպես փառատոնին մասնակցում են աշխարհահռչակ ջազմեններ: Ավանդույթի համաձայն՝ փառատոնը բացվեց «Ararat Jazz Night» համերգով, որի գլխավոր հյուրն էր ամերիկացի հռչակավոր վիրտուոզ բաս կիթառահար և երգիչ, Գրեմմի մրցանակի դափնեկիր Ռիչարդ (Ռիչարդ) Բոնան:

Այս տարի «YEREVAN JAZZ FEST»-ը հանդես եկավ նաև «Ուսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հետ համագործակցությամբ: Նոյեմբերի 26-ին Կինոյի տանը ցուցադրվեց «Կեսգիշերին մոտ» (Round midnight) կինոնկարը, որում նկարահանվել է Մարտին Սկոտզեն, իսկ երաժշտությունը գրել է ամերիկացի հանրահռչակ դաշնակահար և կոմպոզիտոր Ջերրի Ջենքոն: Ֆիլմի ցուցադրությունից զատ երեկոյի ընթացքում տեղի ունեցավ նաև ջազ-համերգ, որի ըն-



թացքում երիտասարդ երաժիշտները հանդես եկան ոչ միայն սեփական ստեղծագործությունների կատարմամբ, այլև ներկայացրեցին ֆիլմում հնչած մեղեդիների սեփական մեկնաբանումը:

Այս տարի ջազ-փառատոնը դուրս եկավ մայրաքաղաքի սահմաններից: Նոյեմբերի 30-ին «Դիլիջազ»-ում Լևոն Մալխասյանի, Վահագն Հայրապետյանի և Նիկողայոս Վարդանյանի մասնակցությամբ կայացավ ևս մեկ հետաքրքիր ջազ-

համերգ:

Փառատոնի շրջանակներում ղեկավարների 2-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ Առնո Բաբաջանյանի 100-ամյա հոբելյանին նվիրված «YEREVAN JAZZ FEST 2021»-ի և Հայաստանի պետական կամերային նվագախմբի համատեղ միջոցառումը, որի ընթացքում հնչեցին Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունները՝ Վահագն Հայրապետյանի ջազային մշակմամբ: Երեկոյի մասնակիցներն էին՝ Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան), Վահագն Հայրապետյան տրիոն, մենակատարներ՝ Մավր Սկրտչյանը (բարիտոն), Սոֆյա Սայրադյանը (սոպրանո), Դանիել Մելքոնյանը (շեփոր): Համերգը ղեկավարեց դիրիժոր Ռոբերտ Մլքեյանը:

Հարկ է նշել, որ համերգը աշնանը ներկայացվել է Կամերային երաժշտության տան զբոսայգում, ինչպես նաև մարզերում՝ Կապանի մշակույթի կենտրոնում և Գորիսի վ. Վաղարշյանի անվ. պետական դրամատիկական թատրոնում՝ արժանանալով հանդիսատեսի ջերմ ընդունելությանը:

«YEREVAN JAZZ FEST 2021» միջազգային 7-րդ փառատոնը կեզրափակվի ղեկավարների 6-ին՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահում, որտեղ տեղի կունենա փառատոնի պատվավոր հյուրի՝ աշխարհահռչակ թմբկահար, կենդանի լեգենդ Բիլլի Քոբեմի համերգը: Վերջինս ելույթ կունենա իր բեմդով: Փառատոնի վերջին երեկոն նվիրված է սիրված ջազ երաժիշտ, թմբկահար, ջազի պատմության գիտակ և մանկավարժ Արմեն Թուրունջյանի (Չիկո) հիշատակին: Ի դեպ Չիկոն ծանոթ էր Բիլլի Քոբեմի հետ, շատ ջերմ էր արտահայտվում նրա մասին, հպարտանում իրենց ծանոթությամբ:

Նյութը պատրաստեց՝
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ
Երաժշտագետ, «Երաժիշտ» ամսագրի գլխավոր խմբագիր

<https://style.news.am/am/news/84451/yerevan-jazz-fest-2021-mijazgayin-7-rd-paratony-kmeknarki-ashkharhahhrchak-rishar-bonay-hamergov.html>
<https://hy.amradio.am/2021/10/24/%D5%B6%D5%B8%D5%B5%D5%A5%D5%B4%D5%A2%D5%A5%D5%B6%D5%B8%D5%B5%D5%A5%D5%B6%D5%AF%D5%B4%D5%A5%D5%AF%D5%B6%D5%A1%D5%B6%D5%AF%D5%AB-yerevan-jazz-fest-2021-%D5%A8/http://sobesednikam.ru/panorama/item/5480-syurpriz-yerevan-jazz-fest-2021>
<https://www.panorama.am/am/news/2021/12/02/%D5%BB%D5%A1%D5%A6-%D6%83%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BF%D5%B8%D5%B6/2607195>

